ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 86. Համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները

1. Համայնքի բյուջեն ձևավորվում է համայնքների բյուջեներին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերից, այդ թվում՝

~~1) հարկային եկամուտներ՝~~

~~ա. տեղական հարկերից՝~~

~~- հողի հարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար,~~

~~- գույքահարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար,~~

~~- հյուրանոցային հարկ,~~

~~բ. եկամտային հարկից մասհանումներ,~~

~~գ. շահութահարկից մասհանումներ,~~

~~դ. բնապահպանական վճարներից մասհանումներ,~~

~~ե. հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ:~~

~~Եկամտային հարկի, շահութահարկի և բնապահպանական վճարների գումարներից համայնքների բյուջեներ կատարվող մասհանումների տոկոսաչափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով.~~1) հարկային եկամուտներ՝

ա. տեղական հարկերից՝

- անշարժ գույքի հարկ,

- փոխադրամիջոցների գույքահարկ,

բ. եկամտային հարկից մասհանումներ,

գ. շահութահարկից մասհանումներ,

դ. բնապահպանական հարկից մասհանումներ,

ե. անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի խախտումների համար հարկ վճարողներից տեղական հարկերի գծով գանձվող տույժերը և տուգանքները:

Եկամտային հարկի, շահութահարկի և բնապահպանական հարկի գումարներից համայնքների բյուջեներ կատարվող մասհանումների տոկոսաչափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով.